**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 , arjut.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N ԳԱ63
*24 օգոստոս 2017թ.*

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ավագանու թիվ 16-Ա որոշումը:

28.08.2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ.* `

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjut.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 16-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԱՐՋՈՒՏ ՀԻԴՐՈՓՈՆԻՔՍ>> ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման Մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, ելնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի (այսուհետև՝ Արջուտ համայնք) տնտեսական շահերից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավար Վարդան Շայվալատի Մկրտչյանի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում գյուղատնտեսական և անասնապահական զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով՝ <<ԱՐՋՈՒՏ ՀԻԴՐՈՓՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հիմնադրման ձևով մասնակցելու մասին,

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում <<ԱՐՋՈՒՏ ՀԻԴՐՈՓՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում 15 (տասնհինգ) տոկոս բաժնեմասը ձեռք բերելու՝ հիմնադրման նախապատրաստական աշխատանքներն իրականացնող և նախաձեռնող խմբի հետ ձեռք բերված նախնական համաձայնությունը, Արջուտ համայնքի ավագանին.

*Որոշում է*

1.Մասնակցել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում գյուղատնտեսական և անասնապահական զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով հիմնադրվող <<ԱՐՋՈՒՏ ՀԻԴՐՈՓՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ 15 (տասնհինգ) տոկոս բաժնեմասով կամ մասնակցության ուժով:

2.Տալ համաձայնություն, որպեսզի Արջուտ համայնքի ղեկավար Վարդան Շայվալատի Մկրտչյանը (անձնագիր՝ AK0403089, տրված՝ 24.11.2009, 033-ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշ՝ 3905620243 , բնակության վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Արջուտ, 7-րդ փողոց, տուն 13) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի անունից մասնակցի և

ներկայացնի Արջուտ համայնքի շահերը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում գյուղատնտեսական և անասնապահական զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով հիմնադրվող <<ԱՐՋՈՒՏ ՀԻԴՐՈՖՈՆԻՔՍ>> անվանումով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր ժողովին:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (4) , Դեմ (0) , Ձեռնպահ (0) , Բացակա (1)

Բաբայան Տիգրան

Խոյեցյան Հովհաննես

Դալլաքյան Վազգեն

Մկրտչյան Սաթենիկ

Շահինյան Անդրանիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ